ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՑԱՂԿԱԼԱՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МЕРИЯ ЦАХКАЛАНДЖ

21.11.2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից Ձեզ ենք ներկայացնում Ծաղկալանջ համայնքի ավագանու 14.11.2016թվականին կայացած թիվ 8 հերթական նիստի որոշումները:

Առդիր՝ 9 էջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԼԱՆՋ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ /Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ/

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մտած թիվ 112.63/13139-16
«23» 11 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկալանջ համայնք, 4-րդ փողոց N9

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2016 թվականի N 27

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12 հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել ավագանու նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

	կողմ (ստորագրություն)	դեմ (ստորագրություն)	ձեռնպահ (ստորագրություն)
1. Երվանդյան Երվանդ			
2. Դավթյան Գևորգ			
3. Պողոսյան Մխիթար			
4. Ալոյան Ալիկ			
5. Միքայելյան Սլավիկ			

ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ /Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Հավելված
Արմավիրի մարզի
Ծաղկալանջ համայնքի
ավագանու « 14 » նոյեմբերի 2016թ.
N27 որոշման

1. Օրակարգի հաստատում:

/ Մ. Մկրտչյան-Համայնքի ղեկավար/

2. Ծաղկալանջ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 3-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:

/ Լ.Գրիգորյան - Համայնքի ղեկավարի տեղակալ/

3. Ծաղկալանջ համայնքի վարչական տարածքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին:

/ Լ.Գրիգորյան - Համայնքի ղեկավարի տեղակալ/

3. Ծաղկալանջ համայնքի բնակիչներին գույքահարկի արտոնություններից օգտվելու մասին:

/ Լ.Գրիգորյան - Համայնքի ղեկավարի տեղակալ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկալանջ համայնք, 4-րդ փողոց N9

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2016թվականի N 28 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, 70-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի ավագանին *որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 21-ի «2016 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 3-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.
2. Բյուջեի եկամտային մասում ավելացնել ինքնակամ կառուցված շինության գրանցման կամ օգտագործման իրավունքի տրման վճարից ստացված գումարը ընդամենը 176.1 հազ.դրամ և տալ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01.1.1 հատվածի 4212 հոդվածին :
3. Համայնքի 2016թվականի բյուջեի պահուստային ֆոնդի 730.3 հազ.դրամից 312.0 հազ. դրամ տալ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 09.1.1 հատվածի 4637 հոդվածին ,418.3 հազ.դրամ տալ 08.2.3 հատվածի 4111 հոդվածին:08.2.3 հատվածի 4112հոդվածի 271.6հազ. դրամը տեղափոխել և տալ նույն հատվածի 4111 հոդվածին: 01.1.1 հատվածի բյուջեով նախատեսված 4112 հոդվածի 857.8 հազար դրամը և 4264 հոդվածից 400.0 հազար դրամը տեղափոխել 4111 հոդված և 4264 հոդվածի մնացած 400.0հազար դրամը տեղափոխել և տալ 4212 հոդվածին:10.7.1 հատվածի 4819հոդվածի 150.0 հազար դրամը տեղափոխել և տալ 4729 հոդվածին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ

	կողմ (ստոր.)	դեմ (ստոր.)	ձեռնպահ (ստոր.)
1. Երվանդյան Երվանդ			
2. Դավթյան Գևորգ			
3. Պողոսյան Մխիթար			
4. Միքայելյան Սլավիկ			
5. Ալոյան Ալիկ			

ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ /Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկալանջ համայնք, 4-րդ փողոց N9

ՈՐՈՇՈՒՄ

14 նոյեմբերի 2016 թվականի N 29

ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով « Տեղական տուրքերի և վճարների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի ավագանին

որոշում է՝

1. Սահմանել համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ

	կողմ (ստորագրություն)	դեմ (ստորագրություն)	ձեռնպահ (ստորագրություն)
1. Երվանդյան Երվանդ			
2. Դավթյան Գևորգ			
3. Պողոսյան Մխիթար			
4. Ալոյան Ալիկ			
5. Միքայելյան Սլավիկ			

ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ /Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ/

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՃԱՂԿԱԼԱՆՋ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14 -Ի N 29-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՃԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

«1.»Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինարարությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

«1)» մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝5000/ հինգ հազար/ դրամ:

«2)»սույն կետի «1)» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

«ա.»/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000/տասս հազար/ դրամ:

«բ.»/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000/տասնհինգ հազար/ դրամ:

«գ.»/ 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 20000 /քսան հազար/ դրամ:

ոչ հիմնական օբյեկտների տեղադրման համար՝

«3)». մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000/մեկ հազար/ դրամ:

«4)». 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ:

«2.» Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինարարությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

«1)» չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ դեպքում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝1000 / մեկ հազար / դրամ:

«2)» բացի օբյեկտի վերակառուցման ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «1)» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

«3)» նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ դեպքում ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

«3.» Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է1000 /մեկ հազար /դրամ:

«4.» Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

«1)» ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար ՝ 5000 /հինգ հազար/ դրամ :

«1)» ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար ՝3000 / երեք հազար / դրամ :

«5.» Համայնքի տարածքում՝

«1)» բացօթյա առևտուր կազմակերպելու թուլատվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար ՝ 350 /երեք հարյուր հիսուն /դրամ:

«2)» հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թուլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000/ մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

«6.» Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թուլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000 /հիսուն հազար /դրամ:

«7.» Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի , շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24^{00}-ից հետո բաշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

«1)» առևտրի օբյեկտների համար՝ 25.000/ քսանհինգ հազար/ դրամ:

«2)» հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար ՝ 50.000 /հիսուն հազար/ դրամ :

«3)» բաղնիքների (սաունաների) համար՝ 200.000 /երկու հարյուր հազար /դրամ:

«4)» խաղատների կազմակերպման համար՝ 500000 /հինգ հարյուր հազար/ դրամ:

«5)» շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250.000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ:

«6)» վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100.000 /մեկ հարյուր հազար /դրամ:

«8.» Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

«1)» ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1.000 /մեկ հազար/ դրամ:

«2)» թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավել ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2.500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

«3)» ցայլ արտաքին գովազդի համար ՝ 500 /հինգ հարյուր/ դրամ:

«4)» դատարկ գովազդային վահանակների համար ՝ 700յոթ հարյուր դրամ:

«9.» Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է ՝ 1000 /մեկ հազար / դրամ:

«10.» Համայնքի տարածքում մաղդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ:

«11.» Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000 / երեք հազար / դրամ:

«12.» Համայնքի տարածքում աղբահանության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր բնակչի հաշվով 400 /չորս հարյուր / դրամ:Հավաքագրումը սահմանել 0:

Աշխատակազմի քարտուղար՝ Ս. Սենիքերիմյան /

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկալանջի գյուղական համայնք, 4-րդ փողոց N9

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2016 թվականի N 30

ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի չորրորդ կետով, «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանին

որոշում է՝

1.Ծաղկալանջի գյուղական համայնքի բնակիչներին արտոնել փոխադրամիջոցների գույքահարկի արտոնություններից՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

	կողմ (ստորագրություն)	դեմ (ստորագրություն)	ձեռնպահ (ստորագրություն)
1. Երվանդյան Երվանդ			
2. Դավթյան Գևորգ			
3. Պողոսյան Մխիթար			
4. Միքայելյան Սլավիկ			
5.Ալոյան Ալիկ			

ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ /Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Հավելված
Արմավիրի մարզի
Ծաղկալանջ համայնքի
ավագանու «14» նոյեմբերի 2016թ.
N-30 որոշման

ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

1.Օզմանյան Ալիխան - ընդ. 56275 դրամ

ԳԱՋ-24-10

2013թվական - 10000դ. տույժ - 5475դ.
2014թվական - 10000դ. տույժ - 5475դ.
2015թվական - 10000դ. տույժ - 5325դ
2016թվական - 10000դ.

Աշխատակազմի քարտուղար՝ / Ս. Սենիքերիմյան /